Բա

ՏԵՍՈՒՉ

Հ· ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ

1837 ՓԵՏՐՈՒԱՐ 10[1] — 1846[2] ՀՈԿՏԵՄԲԵՐ 25

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ Հ· *ՍԱՄՈՒԷԼ ՍԱՄՍԱՐԵԱՆ՝ շար·* ց1839, – Հ· *ԵՍԱՅԻ ՄՉՐԱՔԵԱՆ՝* 1841 *Յուլիս.*

ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ Հ· *ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝ շար·* ց1837 *Սեպտեմբեր* 15, – Հ· *ՄԻՔԱՅԷԼ ՋԷՄՊԷՐՃԷՃԵԱՆ՝* 1837 *Յուլիս* 7[3], – Հ· *ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝* 1839 *Օգոստոս* 30 – 1846.

ՄԱՏԱԿԱՐԱՐ Հ· *ՍԱՄՈՒԷԼ ՍԱՄՍԱՐԵԱՆ՝ շար·* ց1839[4], – Հ· *ԱՆՏՈՆԻՈՍ ՍՈՖԵԱԼԵԱՆ («գործակալ և մեծաւոր»)՝* 1840 *Դեկտեմբեր* – 1841, – Հ. *ԵՍԱՅԻ ՄՉՐԱՔԵԱՆ՝* 1841 *Օգոստոս* 22-1846.

ՈՒՍՈՒՑԻՉ Հ· *ԹՈՎՄԱՍ ՉԱՄՉԵԱՆ՝* 1837 *Փետրուար* 10–1839 *Դեկտեմբեր* 9, – Հ· *ԵՍԱՅԻ ՄՉՐԱՔԵԱՆ (և «դաստիարակ»)՝* 1840, – Հ· *ՍՏԵՓԱՆ ՆԱԶԸՃԵԱՆ («վարժապետ և դաստիարակ մանկտւոյն»)՝* 1845 *Օգոստոս* 31 – 1848 *Յուլիս* 16.

ԱՇԽ· ԵՂԲԱՅՐ *ԵՂ· ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒՄՈՒՏԵԱՆ*[5] 1840 *Դեկտեմբեր*, – *Նոյնը՝* 1841 *Մայիս* – 1856 *Դեկտեմբեր.*

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Այս թուականին Հ. Սարգիս արդէն Տեսուչ է Ռափ. Վրժ.ի. այժմ Մուրատեան Վրժ.ի տեսչութիւնն ալ միասին պիտի վարէ։ (Բացառիկ պարագայիս շուրջ տես ՃԵռագայ Ռափ. Վարժ.ի Ճերքեւ Ա. Տարեչարք՝ Ծանօթ.* 3)*։ Մարտ* 3-*ին կը ձեռնարկէ այս պաշտօնին ի փառուս։*

Հ. Սարգսի տեսչութեան երկրորդ տարին՝ այն է 1839*ին Միաբանութիւնս տեսնելով Մուրատեան դպրոցի աշակերտաց տարուէ տարի յաւելումը, և փափագելով որ յարմարագոյն իր սեփական դպրոցատեղին ունենայ, կը գնէ նոր հող մը ի փառս* Pra di Valle-*ի* Misericordia *կոչուած թաղին մէջ։ Մեծ հանդէսով կը կատարուի անոր հիմնարկէքը. հանդիսադիրն է Գերպ. Սոմալեան. վանքէն* 20 *միաբաններ ներկայ կ'ըլլան եկեղեց. զգեստներով. ներկայ են Մուրատեան վարժարանէն զատ նաեւ Ռափ. Վրժ.ի աշակերտները։ Սոմ. Աբբ. կը գրէ* 1839 *Օգ.* 11-*ին այսպէս. «Ի* 11 *ամսոյս զատն ժամաւ առաւօտուն յաջողելով Տեառն եղեւ հանդէս հիմնարկութեանն ամենայն լաւագոյն կարգաւ և փառօք ի զարմացումն աշխարհախումբ հանդիսականացն։ Ուր էին ամենայն ազնուականք քաղաքին, աւագանին և եպիսկոպոս քաղաքին Մոնս. Ֆարինա. զառաջինն ժողովեալք ի պալատան Ջաքքօյին, և անտի կառօք մինչեւ ի դուռն աւերակին, անդ թափոր կազմեալք եկեղեցական պատրաստութեամբք մտին ի ներքս ի տեղի հիմնարկութեանն։ Եւ իբրեւ կատարեցաւ հանդէսն երգօք և երաժշտական նուագածութեամբ, և խաժամուժին բարձրաձայն աղաղակաւ բարեմաղթութեան, երկոքին եպիսկոպոսունք և համօրէն աւագանին նովին թափորաւ եկեալ արտաքս, իւրաքանչիւր ելին ի կառս, և ժողովեցան դարձեալ ի պալատն Ջաքքօյի, ուր մեծածախս և մեծահանդէս պաշտեցաւ հանդիսականացն ամենեցուն զովացուցիչն անուշահամ և սննդարար։ Զկնի ճաշուն ի ժամ հինգ ճաշ մեծահաց ի Մուրատեան Վրժ.ին, ուր հրաւիրեալքն էին ոգիք իբր քսան, յորս նշանաւորքն՝ Մոնս. Ֆարինա, Բրինչիբէ հազարապետ և հրամանատար զօրաց կողմանցն, Տելեկաթ, Բոտեստա, Գօնինի հազարապետ ծովային և այլք, առ որս չոգայ ի վաղիւ անդր ի շնորհակալութիւն և ընդ երեկս դարձայ ի Ֆիէսսոյ. («Անցք օրաժամք»)։ (Այս և ուրիշ վաւերագրեր ուղղելի կը յայտարարեն «Երկ՛. Կրթ. Գործ. Վեն. Մխ. Միաբ.» մատենին մէջ սոյն հիմնարկէքի թուականը, որ* 1839-*ի տեղ* 1836 *գրած է, էջ* 108. *ինչպէս նաեւ հացկերոյթի վայր կը նշանակէ Մուր. Վրժ.ը ի* Prato della Valle*։ Ընդհակառակն մեր վաւերաթուղթը որոշ կը դնէ հացկերոյթի վայր ոչ թէ Մուր. Վրժ.ը՝ այլ Ջաքքօյի ապարանքը)։ Հետեւեալ փոքրիկ մանրամասնութիւններն ունի* 1839*ի Օրագր.ը. յետ ըսելու թէ կային գինուորք և զին. երաժիշտք՝ կը յաւելու.*